


ՀԱՅ ԱՌԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԿ, ՄԱՐՏ 8, 1930

ԹԻԻ 5



ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՂԷՃ» ՀԱՆԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱԿԱՍ Ս. ԳԻՐԲԸ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՄԵՄԼԴՂՈՐԴ ԲԱՅՅ ՄԵԱՄԷՋ ԲԱՌԵՐ

ՓՐՈՑ. Զ. ՊԷՋՃԵԱՆ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ՎԵՐ. Յ. ՇՆՈՐՀՕՐԵԱՆ

ՄԵՐՆ ՆԵՐՍԷՍ

ՌՇՏՈՒՆԻ

ԱԻԵՏՆԶ. ՄԱՍՆԱԽՈՒՄԲԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՎԵՐ. Ա. ՇԻՐԱՃԵԱՆ

ՔԻՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳԻՒՏԵՐ

Տ. Ճ. Խ.

ՊԵՂՈՒՄՆԵՐ Ս. ԳՐԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ

Տ. Ճ. Խ.

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱԻԵՏ. ԿԵԱՆՔ (Շարունակութիւն)

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՎԱՐԴԱՆԱՆՅԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Էջիւ Օլուպէն կը գրուի. —

Հինգշաբթի օր (Փետ. 27) վարդա-
նանց աօնի տօթիւ եկեղեցիին մէջ
հանդէս մը տեղի ունեցաւ ուր մի քանի
արտասանութիւններ եւ երգեր եղան,
Պատ. Յ. Կիւրէքեան եւ Վեր. Ա. Պէր-
պէրեան խօսեցան: Եկեղեցին հրաւի-
րած էր Վեր. Պէրպէրեանը խօսելու եւ իր
ժողովուրդը ներկայ գտնուելու համար,
ասիկա մեծ շնորհակալութեան արժանի
եղաւ: Դպրոցս կանոնաւոր կերպով կը
շարունակուի, որ սակայն չէնքի մը
պէտքն ունի: Ասոր ալ պիտի սկսինք
մօտերս, գետինը արդէն գնուած է:

Կ'ուզեմ երախտագիտական զգացու-
մով շնորհակալութիւնս յայտնել մասնա-
ւորապէս քօչկապետ Տոքթ. Ա. Ալթուն-
եանի եւ իր հիւանդանոցին մէջ ինծի հոգ
տանող պաշտօնէութեան, ինծի ցոյց
տրուած գուրգուրոտ եւ անթերի խնամ-
քին համար, զոր վայելեցի նոյն հիւան-
դանոցին մէջ հիւանդութեանս դարմա-
նումին համար իմ անցուցած 9 օրերուն
միջոցին: Իմ շնորհակալութիւններս կը
յայտնեմ նաեւ ինծի ցաւակցութիւն եւ
կարեկցութիւն յայտնող եւ այցելող բա-
րեկամներուն:

ՏՈՔԹ. Ն. ՏԷՐՊՕՂՈՍԵԱՆ

Ուրախ ենք որ Տոքթ. Տէրպօղոս-
եան ապաքինած ըլլալով փետր. 10ին
Գըրըզխան մեկնած է:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, ՄԱՐՏ 8, 1930

ԹԻԻ 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱԿԱՍ Ս. ԳԻՐԲ

«Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է»

«Բոլոր Գիրքը» բացատրութիւնը տարածած առում մ'ունի. որոնք կը կազմեն այս «բոլոր» ին մասերը, ի՞նչ է այդ ամբողջական գրքին պարունակութիւնը, Այս հարցումին պատասխանն է որ այդ «բոլոր» որակումին արժէք մը կուտայ:

Նրբ քրիստոնէական եկեղեցին հաստատուեցաւ պատրաստուած Ս. Գիրք մը կար արդէն, որ գրեթէ ներկայ Հին Կրտակարանէ կը բաղկանար միայն: Այս Հին Կտակարանի, սակայն, գործածութեան մէջ եղող օրինակները իրարմէ կը տարբերէին իրենց պարունակութիւններով: Պաղեստինի Հրեաները կը գործածէին Եբրայերէն լեզուով բնագիր մը, 22 մասերէ բաղկացած որոնք իրենց պարունակութեամբ կը հաւասարին ներկայ բողոքականութեան կողմանէ ընդունուած Հին Կտակարանի 39 գիրքերուն: Իսկ Աղեքսանդրիոյ հելլենախօս հրեաները կը գործածէին յունարէն օրինակ մը, ծանօթ Եօթանասնից Թարգմանութիւն անունով, որ աւելի գիրքեր կը պարունակէր քան Պաղեստինեանը: Ահա այս յաւելիալ գիրքերը, որոնց թիւը վերջը 14ի հասաւ, ծանօթ են իբր արօթիքի, կամ անկանոն գիրքեր, որոնք իբր Աստուծմէ ներշնչուած սրբազան գիրքեր չեն ընդունուած Պաղեստինի ուղղափառ հրեական եկեղեցիին և Բողոքական եկեղեցիին կողմանէ: Պէտք է սակայն հոս յիշել թէ Աղեքսանդրիոյ Հրեայ եկեղեցին ալ հաւասար արժէքով

չէր գնահատեր Եօթանասնից Թարգմանութեան բոլոր գիրքերը, միշտ աւելի հեղինակաւոր և նախապատիւ համարելով Հնգամատեանը, Հին Կտակարանի առաջին հինգ գիրքերը:

Նոր Կտակարանի գրողները կը գործածէին Եօթանասնից Թարգմանութիւնը: Բայց տաիկա չինշանակեր թէ անոնք հաւասարապէս ներշնչուած կը նկատէին անոր բոլոր մասերն անխտիր. քանզի անկանոն գիրքերէն ուղղակի մէջընդմէջներ չեն ըրած անոնք, այլ անուղղակիակ նարկումներ կընէին իրենց գրութեանց մէջ:

Ոչ-հրեայ քրիստոնեաները, մանաւանդ չղարգացած մասը, հելլենախօս կամ մեծ մասամբ յունագէտ ըլլալուն համար ստիպուած գործածեցին Եօթանասնից յունարէն Թարգմանութիւնը, կամ աւելի ճիշդը յունախօս հրեաներու մէջ տարածուած կանոնական կամ անկանոն սուրբ նկատուած գիրքերը, առանց անոնց լուկական արժէքը քննութեան ենթարկելու: Բայց շատ մը քրիստոնեայ, հայրապետներ անկանոն նկատած են Եօթանասնից Թարգմանութեան մէջ գտնուող, եւ միայն Աղեքսանդրիոյ հելլենացած հրեաներու մէջ գործածական կարգ մը աւելորդ գիրքերը: Յերոնիմոս (Ժէրոմ) հայրապետ իր Լատիներէն Թարգմանութեան մէջ Պաղեստինեան կանոնին հետեցաւ եւ անկանոն նկատեց Եօթանասնից Թարգմանութեան մէջ գտնուող յաւելիալ գիրքերը: Ս. Օգոստինոսի ազդեցութեամբն էր որ Հռոմի եկեղեցին արօթիքի մը ընդունեց իբր կանոնական գիրքեր. թէպէտ երկար ատեն Կաթոլիկ եկեղեցիի լաւագոյն խորհող կրօնական-

ները քննադատեցին այս նուիրագործումը: Բայ ի փեշիքս կոչուած ասորաւկան թարգմանութենէն արեւելեան եկեղեցիներու գրեթէ բոլոր թարգմանութիւնները Եօթանասնից յունարէն օրինակէն կատարուած են: Մեր Ե. Գարուզբար թարգմանութիւնն ալ Եօթանասնից թարգմանութենէն եղած ըլլալով կը պարունակէ այդ անկանոն նկատուած գիրքերը: Պէտք է մոռնալ սակայն որ Առաքելական Եկեղեցին ալ հաւասար արժէք չ'ընծայեր Եօթանասնից թարգմանութեան անխտիր բոլոր գիրքերուն, որոնց մէկ մասէն ընթերցումներ չեն կատարուիր եկեղեցիի մէջ:

ԺԶ. դարու բարեկարգութեան ատեն Լուտեր հետեւելով Պաղեստինեան ուղղափառ կանոնին, անկանոն նկատեց արտփրիփան, և իր Գերմաներէն թարգմանութեան մէջ Հին և Նոր Կտակարաններու մէջտեղ զետեղեց զանոնք, իրր ոչ ներշնչեալ բայց օգտակար գիրքեր: Ուրիշ բողոքական եկեղեցիներ սակայն բոլորովին Ս. Գիրքէն զուրս ձգեցին անկանոն գիրքերը:

Արդ վերջացնելով մեր խօսքը կ'ըսենք. Ուղղափառ Եբրայական եկեղեցին, շատ մը յոյն և լատին քրիստոնեայ հայրապետներ, խորհողներ, և Բողոքական եկեղեցիին անկանոն կը նկատեն Եօթանասնից թարգմանութեան մէջ զանուող կտրդ մը գիրքերը, որոնք Աղեքսանդրիոյ Հրէական եկեղեցիին և կարդ մը հին եկեղեցիներու կողմէ ալ հաւասար արժէքով չեն գնահատուած: Հետեւաբար Աւետ. Եկեղեցիին կողմէ նուիրագործեալ Ս. Գիրքը ոչ թէ պակաս այլ ամբողջ է, իսկ ուրիշ եկեղեցիներուն կը պարունակէ աւելորդ գիրքեր, որոնք ոչ ներշնչեալ և անկանոն նկատուած են իրենց պարունակութեան պատճառաւ, զուրկ ըլլալով Աստուածաշունչի վրայ յաւելլի ոեւէ պատգամէ, որ հոն չգտնուի:


ՇՈՂԵՐ

ԿՆՈՋ ՄԸ ՀԱՄԻՔԵՐՈՒԹԻՒՆԸ

Կին մը, որ ապաշխարած էր եւ օրինակելի քրիստոնէական կեանք մը կ'ապրէր, շատ կը տառապէր իր աշխարհիկ էրկան կեանքին պատճառաւ: Իր էրիկը օր մը մինչ իր զուարճաւէր ընկերներուն հետ իրիկուն մը կ'անցնէր պանդոկի մը մէջ, կանանց վրայ խօսք եղած պահուն հպարտութեամբ սկսաւ գովել իր կինը, որուն մասին ըսաւ թէ ինքզինքը այնպէս լաւ կրնար կառավարել որ եթէ կէս գիշերին իր ընկերները տուն տանէր եւ անկէ պահանջէր որ ճաշ մը պատրաստէ ուրախ զէմքով պիտի գոհացնէր ամբողջը: Ընկերները սին պարծենկոտութիւն նկատեցին ասիկա, և զբաւ բռնեցին թէ անկարելի է այս: Հետեւաբար մարդը իր ընկերները տուն առաջնորդեց, և ըսաւ սպասուհիին, որ իր տիրուհին կանչէ ընթրիք մը պատրաստելու համար: Կինը արթնցաւ, հագուեցաւ և կատարեալ քաղաքավարութեամբ ընդունեց բոլոր հիւրերը, սեղանը շտկեց, հոն նստելով հիւրերը մեծարեց շնորհալի եւ սրախ արտայայտութեամբ: Հիւրերը չկրցան իրենց հիացումը չարտայայտել, եւ անոնցմէ մէկը պատմելով պանդոկի խօսակցութիւնը՝ հարցուց կնոջ թէ ինչպէ՞ս ասիկա կարելի է իրեն համար: Կինը սապէս պատասխանեց. «Տէր, երբ ես ամուսնացայ ես և ամուսինս ապաշխարած չէինք: Բայց ատկէ վերջը Աստուծոյ հաճելի թուած էր որ զիս այդ վտանգաւոր վիճակէն ազատէ: Էրիկս, աւաղ, տակաւին կը շարունակէ իր նախկին ընթացքին մէջ. ես կը դողամ երբ իր ապագան կը խորհիմ. եթէ իր այս վիճակին մէջ մեռնի ան՝ յաւիտեանս թըշուառ պիտի ապրի: Ասոր համար ես կը խորհիմ որ իմ ներկայ պարտականութիւնս է իմ կարեկիս ընել զայն հոնգիստընելու համար:» Այս պատասխանը այնպէ՞ս ազդեց իր էրիկին վրայ, որ ան շնորհակալ ըլլալով իր կնոջ ազդարարութեան համար դարձի եկաւ, և այդ օրէն սկսեալ քրիստոնեայ էրիկ մը եղաւ:

«Նոր Աւետարներ»ի Խմբագրութիւնը կը փափաքի մասնաւոր թիւ մը հրատարակել Փրոֆ. Յ. Գ. Գրիգորեանի ծննդեան 75րդ տարեդարձին առթիւ, ի յարգանս և ի գնահատութիւն անխոնջ վաստակաւորին յիսնամեայ օգտաշատ գործունէութեան։ Արդ՝ կը խնդրուի անոր բոլոր բարեկամներէն և աշակերտներէն, որ բարեհաճին այս թիւին իրենց մասնակցութիւնը բերել՝ մինչև Մարտ 24, «Նոր Աւետարներ»ի հասցէին ղրկելով իր մասին գնահատական տողեր, կենսագրական մանրավէպեր, ծանօթութիւններ և լուսանկարներ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՄԵԾԱԴՂՈՐԴ ԲԱՅՑ ՄՆԱՄԷՋ ԲԱՌԵՐ

ԿԱՄ

ՍԿԵՊՏԻԿՈՒԹԵԱՆ ՊՍՏՃԱՌԸ

Մարդիկ ինչեր քաջած են և տակաւին կը քաշեն այն բառերէն և բացատրութիւններէն որոնք զարդարուն փոճով ունին բայց միջոցէ գուրկ են, փայլուն երևոյթ ունին բայց հիւթ չունին, քաղցր կը հնչեն բայց անխմաստ են: Մարդկութիւնը կարծես խաղալիք դարձեր է կարգ մը արտաքին ապէս շողշողուն, գրաւիչ, մեծածայն բայց իրականին մէջ պարապ և նշանակութիւնէ զուրկ բառերուն ձեռքին մէջ: Պատմութեան ընթերցողները լաւ կը յիշեն թէ Մատամ Բոլանտ, որ Ֆրանսայի Մեծ Յեղափոխութեան ամենամաքուր դէմքերէն մէկըն էր, ծայրայիղ հանրապետականներու կողմէն ձերբակալուելով մինչ կառավանատ կ'առաջնորդուէր՝ սապէս ազազակեց. «Ո՛վ ազատութիւն, ազատութիւն, քու անունովդ ի՛նչ մեծ ուճիրներ կը գործագրուին»: 1792 էն ի վեր տասը հազարաւոր մարդիկ կախաղան հանուած են ազատութեան, հաւասարութեան և արդարութեան անունով: Արդի քաղաքակրթութեան ըստ պառնացող մեծագոյն ազէտներէն մէկը սոյն մեծաշունչ բառերն են, որոնք սըրտէն չեն բղխիր, անկեղծօրէն չեն գործագրուիր, լեզուէն զատ ուրիշ տեղ դուրս չեն ունենար: Երևութական, կեղծ, մակերեսային և պաշտօնական քաղաքավարութիւնը այսպիսի բառերէն հրապուրուած է և անոնց գերին է:

Քաղաքական աշխարհին նայէ: Այսպիսի մեծ և պարապ խօսքեր ամէն օր որչափ շատ կը գործածուին մամուլի մէջ կամ բեմի վրայ: Ասոնց մէջ անկեղծութիւն փնտռել կը նմանի յարդի մեծ

պարկի մը մէջ ցորենի կամ գարիի հատիկ որոնելու: Ամենամեծ անիրաւութիւններ օրէնքի և արդարութեան անունով կը պաշտպանուին: Ամենանշանաւոր դիտատորներ ազատութեան անունով կ'երգնուն: Մեծամեծ բռնապետներ իրենց գրութեանց և խօսքերուն մէջ հանրապետութիւնէն, սահմանադրութիւնէն և հաւասարութեանէն կը ճառեն: Որչափ կը չարչարուին ազգ և ազգասիրութիւն, հայրենիք և հայրենասիրութիւն, ազգի և հայրենիքի շահեր բառերը: Բայց աւա՛ղ, անոնք յաճախ խաբկատիւ բառեր, կեղծ դիմակներ, ոսկեծամուկ քողեր են՝ որ կը գործածուին անձնական շահերու, անձնական փառասիրութիւններու և միտքերու գոհացում տալու համար: Այս քողերը յաճախ այնքան բարակ են որ մարդ անպատճառ պէտք է չափազանց պարզամիտ կամ կոյր ըլլայ, անոնց ետեւիննիւրը չկարենալ տեսնելու համար: Այսուհանդերձ այսպիսի պարզամիտներու թիւը մեր կարծածէն շատ աւելի մեծ է: Այս կեղծ և մեծ բառերը կախարդիչ ազդեցութիւն մ'ունին հասարակ ժողովուրդին վրայ: Հայաստան, Հայրենիք, Հայ ազգիկ պահիր, ազգիկ վերին շահը, և նման շատ մը բառերը որչափ մեծ տեղ կը գրաւեն մեր հայ մամուլին մէջ: Մեր «Ազգային հանդէս»-ներուն էական մասը ասոնցմէ կը բաղկանայ: Իցիւ թէ ասոնք միշտ անկեղծ մաքուր սրտերէն բղխին, իցիւ թէ ասոնց կէտը, կամ մէկ քառորդը անկեղծ ըլլար: Հայրենիք, ազատութիւն, արդարութիւն, ևայլնի պէս անուշ բառերով մարդերը կրնաս լռեցնել կամ խաբել: Այսպիսի բառեր ափիտի դեղահատերուն կը նմանին, որ թմբիւր և գինովութիւն յառաջ կը բերեն, ամուր կապուած քրակներու բերանները կը թուլցնեն և երբեմն ալ կարգ մը խենդութեանց կ'առաջնորդեն:

Առևտրական աշխարհը լեցուն է

կեղծիքով գործածուող այդպիսի բառերով. «գրամագլուխը այս է», «ներկր չիփոխուիր», «ինծի վատահէ», «քու սիրոյդ համար կ'ընեմ». ասոնք և ասոնց նման չինծու բացատրութիւններ չատկան, որոնցմէ թէպէտ գործի մարդիկ շատ ալ դիւրութեամբ չեն խաբուիր, և սակայն խաբուողներ ալ միշտ անպակաս են:

Այս կեղծիքով շեղուել մեծ բառերը ոչ մէկ տեղ թերեւս այնքան լիարժեք չեն եղած և զեղծումով չեն գործածուած որքան կրօնական մարդիկ մէջ: Մովսէսի տառնարանային մէկն էր նա և «Տէրոջը, քու Աստուծոյդ, անունը պարագայ տեղ բերանդ չառնես» պատուէրը: Մովսէս եթէ այսօր ապրած ըլլար թերեւս սա ևս վրան պիտի աւելցընէր. «կրօնական բարձրագոյն իրողութիւններն ու վիճակները կեղծիքով և թեթեօրէն մի' գործածելու» Ապաշխարութիւն, փրկութիւն, հաւատք, յոյս, սէր, զոհողութիւն, անձնութիւն, հնազանդութիւն, անձնատուութիւն, խոնարհութիւն, եւայլն բառերը անիմաստ են, «ձայն տուող պղինձ և հնչեցող ծնծղանիւր» են, եթէ գործածողին սրտէն իրապէս անոնք չեն բղխիր, եթէ խօսողին կեանքն ու վարքը զանոնք չեն հաստատել, այլ միայն սովորութեան իբր մէկ պահանջը ըլլալով և կամ անձնական զիտումներով կը գործածուին: Այս սորբ բառերուն թեթեօրէն և կեղծիքով գործածումը տեսակ մը սրբապրծութիւն է, մեծ յանցանք է: Ասիկա կեղծաւորութիւն է, որմէ Յիսուս ամէնէն աւելի պիտի անդամալարէ: Ես երբեք չեմ կասկածիր որ Յիսուս իր մաքին մէջ ունէր նաև Փարիսեցիներու կեղծ կեանքերն ու խօսքերը երբ կ'ըսէր, թէ դուք պատասխանատու էք ձեր խօսած ամէն պարագայ խօսքին համար: Գրուած ազօթագիրք գործածելու մեծագոյն թերութիւնն ալ հոս է. եթէ ընթերցողը այդ

աղօթքները և գաղափարները կրնայ լրացնել շատ լաւ, բայց եթէ չի կրնար...: Այս անամէջ մեծ բառերը որչա՛փ մեծ ոճիրներու իբր ծածկոց ծառայած են պատմութեան մէջ: Անոնք որքա՛ն մեծ բաժին ունեցած են խաչակիրներու արշաւանքներուն, կրօնական հալածանքներուն, ջարդերուն և հաւատաքննիչ ատեններուն մէջ: Այս շարժարեալ, խաչեալ կրօնական բառերը շեղուելու են պատմէին թէ ինչե՛ր կրած են խօսքը և գործքը իրարու հակասական, կեղծաւոր, նենգամիտ, սկզբունքէ զուրկ, ապէտ կրօնականներու և աշխարհականներու երեսէն:

Ահա այս պատճառաւ երբեք չզարմանանք որ ներկայիս ամէն շրջանակի մէջ սկեպտիկ հոգի մը կը տեսնուի. ամէն ոք խօսքէն ձանձրացած՝ ա'լ ճշմարտութիւն կը փնտռէ. կարգ մը բառեր, բացատրութիւններ առաջնական պէս պայն գոհացնելու և համոզելու համար անզօր կը մնան: Ճշմարտութիւն և անկեղծութիւն կը փնտռէ անի' իր ականջները կը գոցէ, եթէ բառերուն ետեւ զանոնք խօսողին բարձր նկարագիրն ու կեանքը չի տեսներ ան: Վերջապող Մեծ Պատերազմը և անոր յաջորդող շատ մը զէպքերը մարդոց մէջ այս պոռոտախօսութիւններուն հանդէպ եղած անվստահութիւնը ա'լ աւելի զօրացուց: Այսու հանդերձ փառք կուտանք որ անկեղծ, պարզ մարդերը անզոյ չեն, որոնց թիւը թերեւ մեր կարծածէն աւելի է: Անոնք խօսքով չեն գոհանար, չեն խորուիր, չեն խաբեր, լուռ ու խաղաղ խոնարհութեամբ ճշմարտութեան ետեւէն են, ոչ թէ մարդերու և անոնց խօսքերուն կը նային այլ Անոր որ կ'ըսէ. «Ես եմ ճամբայ, կեանք և ճշմարտութիւն»: «Ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ»: Աշխարհս այսպիսիները կը գնահատէ, և երթալով ալ աւելի պիտի գնահատէ, ասիկա անկասկածելի է:

Ջենոն Պէճման

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ԵՒ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ

Քաղուած Սեկր Լուիսի «Էսէն Աստուածաբանական Ճեմարան»-ին փրոֆեսորներէն Ֆիլիփ Վոլֆերի New-Testament Socio-logy ակունք երկին:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Շատ կարեւոր ժամանակի մը մէջ կ'ապրինք: Այսօրուան աշխարհս նոր շրջան մը թեւակոխած է որ իր պատմական շրջաններէն բոլորովին կը տարբերի: Մենք կը յառաջանանք դէպի ընկերային կատարելութիւն: «Հին բաները անցան, ժամանակները կը փոխուին և հին աւերակներէն նոր կեանք մը կը ծնի», ինչպէս որ բանաստեղծը կ'ըսէ:

Բայց չմոռնանք որ ամէն նորը անպաճառ չաւ չէ: Ուստի եկեղեցին պէտք է ջանայ Աւետարանի ընկերային սկզբունքներուն վրայ հիմնել քաղաքակրթութիւնը, որ տեւական յառաջդիմութեան մէջ է: Ահա այս պատճառաւ եկեղեցին պէտք է այս սկզբունքները գտնել եւ վանոնք ժողովուրդին ուսուցանել:

Նոր կտակարանի ընկերային ուսուցումները ըսելով կը հասկնանք մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսի գաղափարականը Աստուծոյ Թագաւորութեան, անհատի, ընտանիքի, կառավարութեան, սոցիալականութեան, աղքատութեան, զրամագլուխի, գործաւորներու եւայլնի նման հարցերու մէջ: Ներկայիս այս հարցերը բոլոր մարդկութեան համար ալ խնդիրներ են:

Նախ պէտք է խոստովանինք թէ ասոնք հարցեր են որոնց լուծումը այնքան ալ դժուար չէ: Երկրորդ պէտք է յայտնել թէ Քրիստոս թէպէտ ասոնք ուսումնասիրած և ուսուցած էր, սա-

կայն անոնց մասին իր յայտնած գաղափարները որոշ, յստակ ձեւով մեզի չեն հասած: Իսկ երբեմն ալ անոնք Հին Կրտակարանի պատմութիւններուն վրայ հիմնուած ըլլալուն համար շատ տարտաւ մնացած են: Զոր օրինակ:—

1. Արարչագործութեան պատմութեան մէջ մարդու համար Եգիպտոսի պատրաստութեամբ կը սորվեցնէ թէ «Աստուած մարդը կը սիրէ»:

2. Հաւասար անձերու համար ընկերակցութեան պէտքը և կարեկցութեան ընծայած երջանկութիւնը սորվեցնելու համար կը յիշէ կնոջ ստեղծումին պատմութիւնը:

3. Մեղքի ծագումը և անոր արդիւնքը բացատրելու համար անկումի պատմութիւնը կը խօսուի:

4. Եղբայրութեան պէտքը շեշտելու համար մեզի կը ներկայացուի Կայէնի ոճիրը եւ նախանձը, որ մեղքի ամենատեղ մէկ պատկերացումն է:

5. Յակոբ նահապետի պատմութեան նպատակն է բացատրել թէ մարդ պէտք է նախ իր անձնասիրական և ոչ-ընկերային միտումներէն մերկանայ, որ Աստուած կարենայ զինքը գործածել:

6. Յովսէփի պատմութիւնը կը պատկերացնէ որդիական հաւատարմութիւնը, ընտանեկան սրբութիւնը և վեհանձնութիւնը:

Առանց բացառութեան բոլոր մարդարէներն ալ գրեցին և քարոզեցին ընկերային, բարոյական և կրօնական բարեկարգութեանց մասին: Մանաւանդ Յոբի, Առակներու և Ժողովողի գիրքերը, որոնք գործնական կեանքի ինչպէ՞սը և ինչո՞ւն կը բացատրեն, միջամուսնական, ծնողներու և զաւակներու, հարուստի և աղքատի, տիրոջ և ծառայի փոխյարաբերութիւններուն նոր ուղղութիւն մը կուտան:

Քրիստոսի ժամանակը դոյութիւն ունեցող անտեսական զգուարութիւնները

մերօրեայ հարցերուն հետնոյն են: Օրինակի համար. —

1. Անհատական իրաւունքները անտեսել, մանաւանդ մանուկներու, կիներու և բանւորներու իրաւունքներուն հարեւորութիւն չընծայել շատ ընդհանրացած էր:

2. Ընտանեկան սրբութիւնը շատ ստորին աստիճանի վրայ էր. կիներու հազէպ անհաւատարմութիւն, անտարբերութիւն, անպարկեշտութիւն և երկուստեք ամուսնալուծում ընդհանրացած երեւոյթներէն էին:

3. Հարստութեան մէջ անհամեմատ անհաւատարմութիւն: Մէկ կողմէն աներեւակայելի հարստութիւն, իսկ միւս կողմէն սարսափելի չքաւորութիւն եւ թշուառութիւն, ինչպէս որ կը պատկերացուի «Մեծատուն և Ղազարոս» առակին մէջ:

4. Դժգոհութիւն բանւոր դասակարգին մէջ: Քաղաքական ապստամբութիւններ, ազատութեան համար պայքարներ եւ ընդվզումներ, որոնք արդիւնքն են տարբեր յեղիւրու եւ ազգերու միեւնոյն կառավարութեան ենթարկուած ըլլալուն:

5. Հիթանոս աշխարհի բարոյական ստորնութիւնը, եւ Հրեայի կրօնական մոլեռանդութիւնը:

6. Նիւթապաշտութիւն, մտաւորական կրօնք եւ գիտական քաղաքակրթութիւն:

Ի՞նչ էր մեր Տէրոջ, Յս. Բրիտոսի գիրքը այս հարցերուն հանդէպ:

Զահրէ ՅԱԿՈԲ ՇՆՈՐՀՕԲԵԱՆ
(Շարունակելէ)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ (4)

Մեծն Ներսէս Բրիտոսի և քրիստոնէութեան ոգւոյն ճշմարտապէս թա-

փանցող մարդասէր մը, քառեկարգից մը և անխնայ հովիւ մըն էր: Ի՞նչ գծալիւնի վասիւր կրնան քաղել անոր կեանքէն մանաւանդ անոնք որ, փոխանակ ժողովուրդին օգնութեան կարօտ դասակարգը հոգալու, փոխանակ հոգեւորապէս անօթիներու լէզէօններով մտահոգուելու, հովուութեան կոչումը՝ մակերեսային ցոյցերու, փառամուլական արտայայտութեանց, թափօրներու, և պանծացումներու մէջ կը փրնառեն: Անշուշտ մեծ երախտագիրտութեամբ կը խոնարհինք ճշմարիտ և բարի հովիւներու առջեւ, որոնք չողջոգեն փառատենչութիւնները առ ոչինչ համարելով, իրական և հոգեւոր ծառայութեան իսկական միջոցները կը հանդիսանան: Այսօր այս տեսակ հովիւներու և անոնցմէ բղխելիք օրհնութեանց կարօտ է հայ ժողովուրդը:

Ինչպէս նախորդ յօդուածներով յիշած էինք, Մեծն Ներսէս ճշմարիտ բարեկարգից մը ըլլալով հանգիւրձ, հեռաճեա եւ խնամուն հիւանդիք մըն ալ է: Իր երիտասարդութիւնը արքունիքին մէջ անցուցած և քաղաքական հարցերով շրջապատուած լինելով, այդ ուղղութեամբ ալ մեծ փորձառութիւն ձեռք բերած էր, զոր կ'ուզէր՝ ամէն առիթ պատեհ համարելով՝ կիրարկել իշխաններու և թագաւորներու փոխարարներութեանց մէջ: Այնպէս որ, հայ արքունիքին մէջ տիրապէսող և իշխող հանգամանք մը ունէր այն, որու հետեւանքն ըլլալով հայ թագաւորներէն Արշակի և Պապի տաւելութեանց ենթակայ եղաւ. բայց Մեծն Ներսէս քաջ և անխնայ դասաւոր մըն էր: Արշակի մէջ ամբարիշտ տրամբը՝ իր հօրեղբորը՝ Գնիլը սպաննելով, անոր գեղանի տիկնոջ հետ ամուսնանալը՝ յոյն և պարսիկ դիւանագիտական յարաբերութեանց մէջ անոր հետեւած քաղաքականութիւնը, «Արշակաւան» տունուն խայտառականոցի մը հիմնարկու-

թիւնը և այլ աննկարագիր գործեր՝ խորապէս խոցեր էին Մեծ Հայրապետին հոգին: Նախաձայնողը հայրապետը՝ Արշակի հոգեկան այս անկումներուն, սայթաքումներուն և մոլորութեանց համար դառնապէս մտահոգ՝ երբեք նկատի չէր առներ անոր թագաւորական աստիճանը եւ սաստիկ յանդիմանութիւններով կը ձաղկէր անոր ընթացքը, երբեմն նգովքներ ալ խափելով անոր գլխուն:—Աստուծոյ հուրը կը վառէր զայն:

Շնորհիւ քսու նախարարներու և բանասերիւ իշխաններու զրպարտութեանց, Մեծն Ներսէսի և թագաւորի միջեւ արդէն ոչ սիրայիր յարաբերութիւնք՝ սկսան հեռանալէ աւելի սյաղիլ, այնպէս որ յուսահատ հայրապետը գէթ պատասխանատուութիւնէ զիրժ մնալու և չուայտ ու զեղիս պալատականները զիզի և դարձի բերելու ճարտհատ ու միամիտ հաւատքով, ելաւ հրաժարեցաւ անորէն և ժամանակ մը քաշուեցաւ առանձնութեան մէջ: Բայց 3-4 տարի վերջ հայ արքունիքին մէջ յունական դիւանագիտութիւնը յաղթական գործած ըլլալով և նկատելով որ Մեծն Ներսէս ալ ալ ժողովքի վերայ քաղաքանաւորութեան հաւատաւոր կուսակից մըն էր, Արշակ ստիպուեցաւ հարցրապետին հետ հաշտուիլ և խնդրել անկէ որ կրկին բազմի իր գահը:

Քաղաքական դժնդակ կացութեան մը առաջ չուարած՝ Արշակ խնդրեց հայրապետէն որ հաճի Պոլիս երթալ և Յոյներէն օգնութիւն ապահովիլ. բայց կարգ մը պատճառներ արդիւք եղան այդ օժանդակութիւնը ձեռք բերելու բախտաւորութեան: Եւ ապա Պարսից Շապուհ թագաւորը աւերակի վերածեց Հայաստանը, նախարարական և արքայական ընտանիքները աննկարագրելի խայտառակութեանց մէջ սպաննեց, քրիստոնէութիւնը հալածեց և երկրին մէջ

ստրուշաններ կանգնեց: Հայոց կողմէ երկրորդ զիմում աղաչանք մըն ալ ուղղուեցաւ Յունաց, որ գան փրկին Հայաստանը իր արիւնլուայ վիճակէն: Բարեբախտաբար ապարդիւն չմնաց այս խնդրանքը և Յունաց օժանդակութեամբ ընէր որ, Պապ գահ բարձրացաւ: Նոր թագաւորը և Մեծն Ներսէս սկսաւ երկիրը շրջիլ, աւերակները վերականգնել, սգաւորները սրտապնդել և մխիթարել: Բայց այս համադործակցութիւնն ալ երկար չտեւեց և սիրալիր յարաբերութիւնը սկսաւ ցրտանալ, որովետեւ 3-4 տարուան խաղաղ և անխռով կեանքէ մը վերջ Պապ սկսաւ տարիներու փորձառութիւնով և իմաստուն հեռատեսութիւնով օժտուած հայրապետին յորդորները անգոհնել, որովհետեւ հայրապետը սկսած էր անոր ալ ոչ-արքայավայել ընթացքը պախարակել:

Պատմիչներէ ոմանք կը հաւատեն որ, այս պարագաներու տակ, օր մը Պապ կոչուեցի մը կը հրաւիրէ Մեծն Ներսէսը և հոն կը թունաւորէ զայն. բայց ժամանակակից քննադատներ շատ հաւանական չեն նկատեր այս վերագրումը և Մեծ հայրապետին մահը կը վերագրեն տարիներու վշտայի և յոգնատանջ աշխատութեանց հետեւանքով առաջ եկած սրտի կաթուածի մը, որմէ յանկարծամահ եղած է կը կարծեն անմահ հայրապետը:

Ահա այսպէս Հայոց անդուգական Կազմակերպիչը, Բարեկարգիչը, քաջ հովիւը եւ անաչառ դասաւորը կը քաշուի պատմութեան ասպարէզէն, քսան տարուան (354—374) տառապալից կեանքէ մը վերջ, և կը հեռանայ այն յաւէտ՝ քաղաքական խիստ դժնդակ և ողբալի կացութեան մը մատնուած Հայաստանէն: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Հաղիպ

ՌՇՏՈՒՆԻ

(Վերջ)

**ՍՈՒՐԻՈՑ ՀԱՅ ԱՒԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ
ՍԻՆՏՍՐԱՆՉԱԿԱՆ ՄԱՍՆՍԽՈՒՄԻԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԹԵԼԱԴՐՈՒԹ. ՆԵՐՋ**

Յանձնախումբին՝ Յունուարի վերջը տեղի ունեցող մէկ նիստին մէջ ուսումնասիրութեան առարկայ եղան մեր եկեղեցիներուն վիճակին և աւետարանչութեան վերաբերեալ կարգ մը խնդիրներ, և ապա որոշուեցաւ հետեւեալ կէտերը Միութեան եկեղեցիներուն կարեկցութեան և ջանքերուն յանձնել:

1. Միութեան վերջին համաժողովին մէջ յանձնարարուած էր որ շնորհալուծութեան գիրով մը և նիւթական նուիրատուութեամբ «Բահնիւմա»-ի հանդէպ մեր կարեկցութիւնը յայտնենք, ի դնահատութիւն իր օգտակար ծառայութիւններուն: Այս որոշումին գործադրութիւնը Աւետարանչական Մասնախումբին յանձնուած էր, որ հետեւաբար կը յանձնարարէ ամէն եկեղեցիին եւ ժողովուրդին որ Մարտ ամսուան վերջին կիրակին «Բահնիւմա»-ի համար նուէրներ հաւաքէ, ամէն եկեղեցի իր նախընտրած մեթոտին համեմատ, կամ նուիրատուութեանց տոմար մը բանալով կամ գանձանակներու միջոցաւ: Շատ փափաքելի է որ անպայման Մարտին վերջին կիրակին ասիկա կատարուի, եւ արդիւնքը Աւետարանչական Մասնախումբին զրկուի:

2. Որոշուեցաւ որ 1 Յունիս 1927—1 Յունիս 1929 ի շրջանէն մնացած և Աւետարանչական Մասնախումբի վճարուելիք յետեւալ գումարները սիրով գանձուին: Այս երկու տարուան միջոցին Հալէպի Շրջանին եկեղեցիներուն յետեւալ գումարներուն քանակն է 28.43 օսմ. ոսկի եւ Պէյրութի Շրջանին եկեղեցիներունը՝ 19.25 օսմ. ոսկի: Արդ որչափ ալ նեղութեան և դժուարութեան մէջ գտնուած ըլլանք, փափաքելի է որ ամէն եկեղեցի մասնաւոր ջանքեր կա-

տարէ իր յետեւալ գումարը գանձելու համար: Կարգ մը եկեղեցիներուն իրենց բաժինները ամբողջութեամբ վճարելը, իսկ ուրիշներուն այս մասին թերանալը թէ եղբայրութեան հոգիին հակառակ են և թէ գործադրութիւնը փափաքելի գործերուն յետաձգուելուն պատճառ կ'ըլլան:

3. Որոշուեցաւ որ «Նոր Աւետարել»-ի միջոցաւ եկեղեցիներուն ծանօթութիւն տրուի թէ անցեալ երեք տարիներու միջոցին աւետարանչական նպատակով հաւաքուած գումարները ինչպէ՞ս և ո՞ր նպատակներու համար ծախսուած են: Ասիկա պիտի կատարուի երբ ասիկա պիտի ստացուին:

4. Որոշուեցաւ որ Փետր., Ապրիլ, Յունիս, Օգոս., Հոկտ., և Դեկ. ամիսներու վերջին ազօթաժողովները մասնաւորապէս Միութեան եկեղեցիներուն յատկացուին, Տէրաջ գործին մէջ անոնց աւելի յառաջգրմելուն համար: Յաւալի է որ ամէն մէկ քարոզիչ ազօթքի գրաւիչ նիւթ մը պիտի կրնայ ներկայացնել իր ժողովորդին, Միութեան եկեղեցիներուն անունները յիշելով և իւրաքանչիւրին մասին կարճ ծանօթութիւններ տալով. այս միջոցաւ բոլոր եկեղեցիները իրարու պիտի մերձենան, և Տէրն ալ պիտի փառաւորուի:

5. Աւետարանչական նպատակի համար եկեղեցիներուն վճարելիք բաժինները անգամ մ'ալ աչքէ անցուած են, եւ գօրատր եկեղեցիներու բաժիններուն վրայ յաւելումներ եղած, իսկ տրկարներու բաժիններէն պակսեցուած է. ասոր իբր արդիւնք հետեւալ ցանկը պատրաստուած է:—

1 ՅՆՍ. 1929—1 ՅՈՒԼԻՍ 1930Ի	
ՄԻՋՈՑԻՆ ՎՃԱՐՈՒՆԵԼԻՐ ԳՈՒՄՐԸ	
Եկեղեցի	Օսմ. Ոսկի
Հալէպ Ա.գիւղի	30
» Համլտիյէ	15

Ճարապուս

Կըրբ Խան

Պէյլան

Իսթէնաէրուն

Ֆարթըսլը

Քէսապ

Պէյթիաս

Կալատուրան

Էքիլ Օլուգ

Քէօրքիւնէ

Եօղուն Օլուգ

Հալէպ Ասորի

Թարապուս

Լաթաքիա

Ջահլէ

Պէյրութ քաղաք

» Քէմփ

Շամ

Հօմս

Ճիւնի

2

3

2

4

3

7

3

1

2

1.5

2

1

2

2

3

18.5

13

7

2

2

ՔՆՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՁՈՂ ԳԻԻՏԵՐ
ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձկայ գիտական ճիւղ մը որ ներկայիս այնքան մեծ և ազդեցիկ գիրք մը գրաւած ըլլայ մարդկային առօրեայ կեանքին և անոր յառաջգիմութեան մէջ քան քիմիա գիտութիւնը: Շատ հին է քիմիաբանութեան պատմութիւնը: Եգիպտացիք ծանօթացեր էին անոր դաղտիքներէն ումանց, որոնք սերունդէ սերունդ կը փոխանցուէին քահանայական դասակարգին մէջ միայն: Թոյներն ալ իրենց բնական գիտութեանց շարքին մէջ կը յիշէին նաև քիմիաբանութիւնը: Բայց հիներու քիմիական ծանօթութիւնները պատահամբ ստացուած էին քան թէ գիտական փորձառական մեթոտով: Անոնք խեցեղէն անօթներու պատրաստութեան և մետաղագործութեան մէջ, ինչպէս նաև մեռելները զմռսելու արուեստին մէջ—որ մեզի համար թերևս յաւիտենապէս կորսուած գիտութիւն մ'է—քիմիական բաւական բարձր հմտութեան տիրացեր էին:

Բայց նախնեաց քիմիա գիտութիւնը կեանքը յեղաշրջող և զայն կառավարող բնոյթ չէ ունեցած: Արդի քիմիաբանութիւնն է որ գերակշիռ գիրք մը ստացած է մարդկային կեանքի գրեթէ ամէն մարդերուն մէջ, և որուն հրաշագործ հեղաշրջող պատմութիւնը կը սկսի 1770էն ֆրանսացի մեծ գիտուն Լավուազիէով: Վերջին 50 տարիներու միջոցին քիմիա գիտութիւնը հսկայաքայլ յառաջգիմութիւն ցոյց տուած է, որուն «կարեւորագոյն մէկ պատճառը եղած են այն մեթոտները՝ որոնցմով գիտունը կարող կ'ըլլայ իր միջավայրին պայմանները կառավարելու»: Իրր օրինակ կարելի է յիշել բարխիսառնութիւնը:

Աշխարհիս բնակելի մասերուն մէջ բարխիսառնութեան ամենացած աստիճանը զէրոյէն վար 40 է ձմեռուան մէջ, իսկ ցամաքային մասերուն մէջ 40-է 50-է 60-է 70-է 80-է 90-է 100-է 110-է 120-է 130-է 140-է 150-է 160-է 170-է 180-է 190-է 200-է 210-է 220-է 230-է 240-է 250-է 260-է 270-է 280-է 290-է 300-է 310-է 320-է 330-է 340-է 350-է 360-է 370-է 380-է 390-է 400-է 410-է 420-է 430-է 440-է 450-է 460-է 470-է 480-է 490-է 500-է 510-է 520-է 530-է 540-է 550-է 560-է 570-է 580-է 590-է 600-է 610-է 620-է 630-է 640-է 650-է 660-է 670-է 680-է 690-է 700-է 710-է 720-է 730-է 740-է 750-է 760-է 770-է 780-է 790-է 800-է 810-է 820-է 830-է 840-է 850-է 860-է 870-է 880-է 890-է 900-է 910-է 920-է 930-է 940-է 950-է 960-է 970-է 980-է 990-է 1000-է 1010-է 1020-է 1030-է 1040-է 1050-է 1060-է 1070-է 1080-է 1090-է 1100-է 1110-է 1120-է 1130-է 1140-է 1150-է 1160-է 1170-է 1180-է 1190-է 1200-է 1210-է 1220-է 1230-է 1240-է 1250-է 1260-է 1270-է 1280-է 1290-է 1300-է 1310-է 1320-է 1330-է 1340-է 1350-է 1360-է 1370-է 1380-է 1390-է 1400-է 1410-է 1420-է 1430-է 1440-է 1450-է 1460-է 1470-է 1480-է 1490-է 1500-է 1510-է 1520-է 1530-է 1540-է 1550-է 1560-է 1570-է 1580-է 1590-է 1600-է 1610-է 1620-է 1630-է 1640-է 1650-է 1660-է 1670-է 1680-է 1690-է 1700-է 1710-է 1720-է 1730-է 1740-է 1750-է 1760-է 1770-է 1780-է 1790-է 1800-է 1810-է 1820-է 1830-է 1840-է 1850-է 1860-է 1870-է 1880-է 1890-է 1900-է 1910-է 1920-է 1930-է 1940-է 1950-է 1960-է 1970-է 1980-է 1990-է 2000-է 2010-է 2020-է 2030-է 2040-է 2050-է 2060-է 2070-է 2080-է 2090-է 2100-է 2110-է 2120-է 2130-է 2140-է 2150-է 2160-է 2170-է 2180-է 2190-է 2200-է 2210-է 2220-է 2230-է 2240-է 2250-է 2260-է 2270-է 2280-է 2290-է 2300-է 2310-է 2320-է 2330-է 2340-է 2350-է 2360-է 2370-է 2380-է 2390-է 2400-է 2410-է 2420-է 2430-է 2440-է 2450-է 2460-է 2470-է 2480-է 2490-է 2500-է 2510-է 2520-է 2530-է 2540-է 2550-է 2560-է 2570-է 2580-է 2590-է 2600-է 2610-է 2620-է 2630-է 2640-է 2650-է 2660-է 2670-է 2680-է 2690-է 2700-է 2710-է 2720-է 2730-է 2740-է 2750-է 2760-է 2770-է 2780-է 2790-է 2800-է 2810-է 2820-է 2830-է 2840-է 2850-է 2860-է 2870-է 2880-է 2890-է 2900-է 2910-է 2920-է 2930-է 2940-է 2950-է 2960-է 2970-է 2980-է 2990-է 3000-է 3010-է 3020-է 3030-է 3040-է 3050-է 3060-է 3070-է 3080-է 3090-է 3100-է 3110-է 3120-է 3130-է 3140-է 3150-է 3160-է 3170-է 3180-է 3190-է 3200-է 3210-է 3220-է 3230-է 3240-է 3250-է 3260-է 3270-է 3280-է 3290-է 3300-է 3310-է 3320-է 3330-է 3340-է 3350-է 3360-է 3370-է 3380-է 3390-է 3400-է 3410-է 3420-է 3430-է 3440-է 3450-է 3460-է 3470-է 3480-է 3490-է 3500-է 3510-է 3520-է 3530-է 3540-է 3550-է 3560-է 3570-է 3580-է 3590-է 3600-է 3610-է 3620-է 3630-է 3640-է 3650-է 3660-է 3670-է 3680-է 3690-է 3700-է 3710-է 3720-է 3730-է 3740-է 3750-է 3760-է 3770-է 3780-է 3790-է 3800-է 3810-է 3820-է 3830-է 3840-է 3850-է 3860-է 3870-է 3880-է 3890-է 3900-է 3910-է 3920-է 3930-է 3940-է 3950-է 3960-է 3970-է 3980-է 3990-է 4000-է 4010-է 4020-է 4030-է 4040-է 4050-է 4060-է 4070-է 4080-է 4090-է 4100-է 4110-է 4120-է 4130-է 4140-է 4150-է 4160-է 4170-է 4180-է 4190-է 4200-է 4210-է 4220-է 4230-է 4240-է 4250-է 4260-է 4270-է 4280-է 4290-է 4300-է 4310-է 4320-է 4330-է 4340-է 4350-է 4360-է 4370-է 4380-է 4390-է 4400-է 4410-է 4420-է 4430-է 4440-է 4450-է 4460-է 4470-է 4480-է 4490-է 4500-է 4510-է 4520-է 4530-է 4540-է 4550-է 4560-է 4570-է 4580-է 4590-է 4600-է 4610-է 4620-է 4630-է 4640-է 4650-է 4660-է 4670-է 4680-է 4690-է 4700-է 4710-է 4720-է 4730-է 4740-է 4750-է 4760-է 4770-է 4780-է 4790-է 4800-է 4810-է 4820-է 4830-է 4840-է 4850-է 4860-է 4870-է 4880-է 4890-է 4900-է 4910-է 4920-է 4930-է 4940-է 4950-է 4960-է 4970-է 4980-է 4990-է 5000-է 5010-է 5020-է 5030-է 5040-է 5050-է 5060-է 5070-է 5080-է 5090-է 5100-է 5110-է 5120-է 5130-է 5140-է 5150-է 5160-է 5170-է 5180-է 5190-է 5200-է 5210-է 5220-է 5230-է 5240-է 5250-է 5260-է 5270-է 5280-է 5290-է 5300-է 5310-է 5320-է 5330-է 5340-է 5350-է 5360-է 5370-է 5380-է 5390-է 5400-է 5410-է 5420-է 5430-է 5440-է 5450-է 5460-է 5470-է 5480-է 5490-է 5500-է 5510-է 5520-է 5530-է 5540-է 5550-է 5560-է 5570-է 5580-է 5590-է 5600-է 5610-է 5620-է 5630-է 5640-է 5650-է 5660-է 5670-է 5680-է 5690-է 5700-է 5710-է 5720-է 5730-է 5740-է 5750-է 5760-է 5770-է 5780-է 5790-է 5800-է 5810-է 5820-է 5830-է 5840-է 5850-է 5860-է 5870-է 5880-է 5890-է 5900-է 5910-է 5920-է 5930-է 5940-է 5950-է 5960-է 5970-է 5980-է 5990-է 6000-է 6010-է 6020-է 6030-է 6040-է 6050-է 6060-է 6070-է 6080-է 6090-է 6100-է 6110-է 6120-է 6130-է 6140-է 6150-է 6160-է 6170-է 6180-է 6190-է 6200-է 6210-է 6220-է 6230-է 6240-է 6250-է 6260-է 6270-է 6280-է 6290-է 6300-է 6310-է 6320-է 6330-է 6340-է 6350-է 6360-է 6370-է 6380-է 6390-է 6400-է 6410-է 6420-է 6430-է 6440-է 6450-է 6460-է 6470-է 6480-է 6490-է 6500-է 6510-է 6520-է 6530-է 6540-է 6550-է 6560-է 6570-է 6580-է 6590-է 6600-է 6610-է 6620-է 6630-է 6640-է 6650-է 6660-է 6670-է 6680-է 6690-է 6700-է 6710-է 6720-է 6730-է 6740-է 6750-է 6760-է 6770-է 6780-է 6790-է 6800-է 6810-է 6820-է 6830-է 6840-է 6850-է 6860-է 6870-է 6880-է 6890-է 6900-է 6910-է 6920-է 6930-է 6940-է 6950-է 6960-է 6970-է 6980-է 6990-է 7000-է 7010-է 7020-է 7030-է 7040-է 7050-է 7060-է 7070-է 7080-է 7090-է 7100-է 7110-է 7120-է 7130-է 7140-է 7150-է 7160-է 7170-է 7180-է 7190-է 7200-է 7210-է 7220-է 7230-է 7240-է 7250-է 7260-է 7270-է 7280-է 7290-է 7300-է 7310-է 7320-է 7330-է 7340-է 7350-է 7360-է 7370-է 7380-է 7390-է 7400-է 7410-է 7420-է 7430-է 7440-է 7450-է 7460-է 7470-է 7480-է 7490-է 7500-է 7510-է 7520-է 7530-է 7540-է 7550-է 7560-է 7570-է 7580-է 7590-է 7600-է 7610-է 7620-է 7630-է 7640-է 7650-է 7660-է 7670-է 7680-է 7690-է 7700-է 7710-է 7720-է 7730-է 7740-է 7750-է 7760-է 7770-է 7780-է 7790-է 7800-է 7810-է 7820-է 7830-է 7840-է 7850-է 7860-է 7870-է 7880-է 7890-է 7900-է 7910-է 7920-է 7930-է 7940-է 7950-է 7960-է 7970-է 7980-է 7990-է 8000-է 8010-է 8020-է 8030-է 8040-է 8050-է 8060-է 8070-է 8080-է 8090-է 8100-է 8110-է 8120-է 8130-է 8140-է 8150-է 8160-է 8170-է 8180-է 8190-է 8200-է 8210-է 8220-է 8230-է 8240-է 8250-է 8260-է 8270-է 8280-է 8290-է 8300-է 8310-է 8320-է 8330-է 8340-է 8350-է 8360-է 8370-է 8380-է 8390-է 8400-է 8410-է 8420-է 8430-է 8440-է 8450-է 8460-է 8470-է 8480-է 8490-է 8500-է 8510-է 8520-է 8530-է 8540-է 8550-է 8560-է 8570-է 8580-է 8590-է 8600-է 8610-է 8620-է 8630-է 8640-է 8650-է 8660-է 8670-է 8680-է 8690-է 8700-է 8710-է 8720-է 8730-է 8740-է 8750-է 8760-է 8770-է 8780-է 8790-է 8800-է 8810-է 8820-է 8830-է 8840-է 8850-է 8860-է 8870-է 8880-է 8890-է 8900-է 8910-է 8920-է 8930-է 8940-է 8950-է 8960-է 8970-է 8980-է 8990-է 9000-է 9010-է 9020-է 9030-է 9040-է 9050-է 9060-է 9070-է 9080-է 9090-է 9100-է 9110-է 9120-է 9130-է 9140-է 9150-է 9160-է 9170-է 9180-է 9190-է 9200-է 9210-է 9220-է 9230-է 9240-է 9250-է 9260-է 9270-է 9280-է 9290-է 9300-է 9310-է 9320-է 9330-է 9340-է 9350-է 9360-է 9370-է 9380-է 9390-է 9400-է 9410-է 9420-է 9430-է 9440-է 9450-է 9460-է 9470-է 9480-է 9490-է 9500-է 9510-է 9520-է 9530-է 9540-է 9550-է 9560-է 9570-է 9580-է 9590-է 9600-է 9610-է 9620-է 9630-է 9640-է 9650-է 9660-է 9670-է 9680-է 9690-է 9700-է 9710-է 9720-է 9730-է 9740-է 9750-է 9760-է 9770-է 9780-է 9790-է 9800-է 9810-է 9820-է 9830-է 9840-է 9850-է 9860-է 9870-է 9880-է 9890-է 9900-է 9910-է 9920-է 9930-է 9940-է 9950-է 9960-է 9970-է 9980-է 9990-է 10000-է 10010-է 10020-է 10030-է 10040-է 10050-է 10060-է 10070-է 10080-է 10090-է 10100-է 10110-է 10120-է 10130-է 10140-է 10150-է 10160-է 10170-է 10180-է 10190-է 10200-է 10210-է 10220-է 10230-է 10240-է 10250-է 10260-է 10270-է 10280-է 10290-է 10300-է 10310-է 10320-է 10330-է 10340-է 10350-է 10360-է 10370-է 10380-է 10390-է 10400-է 10410-է 10420-է 10430-է 10440-է 10450-է 10460-է 10470-է 10480-է 10490-է 10500-է 10510-է 10520-է 10530-է 10540-է 10550-է 10560-է 10570-է 10580-է 10590-է 10600-է 10610-է 10620-է 10630-է 10640-է 10650-է 10660-է 10670-է 10680-է 10690-է 10700-է 10710-է 10720-է 10730-է 10740-է 10750-է 10760-է 10770-է 10780-է 10790-է 10800-է 10810-է 10820-է 10830-է 10840-է 10850-է 10860-է 10870-է 10880-է 10890-է 10900-է 10910-է 10920-է 10930-է 10940-է 10950-է 10960-է 10970-է 10980-է 10990-է 11000-է 11010-է 11020-է 11030-է 11040-է 11050-է 11060-է 11070-է 11080-է 11090-է 11100-է 11110-է 11120-է 11130-է 11140-է 11150-է 11160-է 11170-է 11180-է 11190-է 11200-է 11210-է 11220-է 11230-է 11240-է 11250-է 11260-է 11270-է 11280-է 11290-է 11300-է 11310-է 11320-է 11330-է 11340-է 11350-է 11360-է 11370-է 11380-է 11390-է 11400-է 11410-է 11420-է 11430-է 11440-է 11450-է 11460-է 11470-է 11480-է 11490-է 11500-է 11510-է 11520-է 11530-է 11540-է 11550-է 11560-է 11570-է 11580-է 11590-է 11600-է 11610-է 11620-է 11630-է 11640-է 11650-է 11660-է 11670-է 11680-է 11690-է 11700-է 11710-է 11720-է 11730-է 11740-է 11750-է 11760-է 11770-է 11780-է 11790-է 11800-է 11810-է 11820-է 11830-է 11840-է 11850-է 11860-է 11870-է 11880-է 11890-է 11900-է 11910-է 11920-է 11930-է 11940-է 11950-է 11960-է 11970-է 11980-է 11990-է 12000-է 12010-է 12020-է 12030-է 12040-է 12050-է 12060-է 12070-է 12080-է 12090-է 12100-է 12110-է 12120-է 12130-է 12140-է 12150-է 12160-է 12170-է 12180-է 12190-է 12200-է 12210-է 12220-է 12230-է 12240-է 12250-է 12260-է 12270-է 12280-է 12290-է 12300-է 12310-է 12320-է 12330-է 12340-է 12350-է 12360-է 12370-է 12380-է 12390-է 12400-է 12410-է 12420-է 12430-է 12440-է 12450-է 12460-է 12470-է 12480-է 12490-է 12500-է 12510-է 12520-է 12530-է 12540-է 12550-է 12560-է 12570-է 12580-է 12590-է 12600-է 12610-է 12620-է 12630-է 12640-է 12650-է 12660-է 12670-է 12680-է 12690-է 12700-է 12710-է 12720-է 12730-է 12740-է 12750-է 12760-է 12770-է 12780-է 12790-է 12800-է 12810-է 12820-է 12830-է 12840-է 12850-է 12860-է 12870-է 12880-է 12890-է 12900-է 12910-է 12920-է 12930-է 12940-է 12950-է 12960-է 12970-է 12980-է 12990-է 13000-է 13010-է 13020-է 13030-է 13040-է 13050-է 13060-է 13070-է 13080-է 13090-է 13100-է 13110-է 13120-է 13130-է 13140-է 13150-է 13160-է 13170-է 13180-է 13190-է 13200-է 13210-է 13220-է 13230-է 13240-է 13250-է 1

և բարձրագոյնը՝ զէրոյէն վեր 115 է ամառուտն մէջ։ Երկար դարեր սառույցի բարեխառնութեան, զէրոյէ 32 վար, և բացօթեայ կրակի մը տաքութեան, 1600 վեր, մէջտեղ գտնուող տարբերութիւնն էր ու մարդուն համար կարելի եղած է։

Ներկայիս գիտունը կրնայ օգը հեղուկի վերածել՝ զայն պաղեցնելով, որ զէրոյէ 310 աստիճան վար է։ Գիտական միջոցներով կարելի եղած է զէրոյէ 458 աստիճան վար պաղութիւն արտադրել։ Յայտնի է թէ տաք երկիրներու ժողովուրդները մտաւորապէս այնչափ զործօն չեն որքան որ են բարեխառն երկրները։ Ամերիկացի յայտնի դէմք մը, Քրիթչիինկ, այրեցիալ գօտիի մէջ յառաջդիմութեան շատ դանդաղ ըլլալուն պատճառը կլիմային վերագրելէ վերջ կ'ըսէ՝ թէ հիւսիսայինները եթէ կրնան ապրիլ և զարգանալ օդը տաքցնելով ինչո՞ւ հարաւայինները չզարգանան օդը զովայնելով, որուն իբր արդիւնքը ճարտարաբանական, զաղթականական, վաճառականական պայմանները մեծապէս պիտի ազդուին։

Գիտական մեթոտներով կարելի եղած է մինչեւ 9000 աստիճան տաքութիւն մը յառաջ բերել, որ արեւի տաքութեան աստիճանին գրեթէ կէսին կը հաւասարի։ «Տանդէի երեւակայած դժոխքի ահուելի բոցերուն տաքութիւնը ասոր քով շատ տկար կը մնայ» 6300 աստիճան տաքութեամբ արուեստական բոց մը կրնայ շատ դիւրութեամբ մէկ սանթրիմէթը թանձրութեամբ պողպատը ծակել եւ կտրել։

Բաղաքականութեան ազդող կարեւոր ազդակներէն մէկն է երկաթի և ածուխի հանքերուն ունէ երկրին մէջ գտնուելը կամ չգտնուելը։ Աւելորդ է յիշել թէ քրիմիաբանութիւնը որչափ տեղ ունի հանքային ճարտարագիտութեան մէջ։ Ռազմավարութեան մէջ ալ քրիմիական գի-

տութեան կարեւորութիւնը շատ ակնհիշ տեսնուեցաւ մեծ պատերազմի միջոցին, բանակին հայթայթելով պայթուցիկներ, թեր, և բազմատեսակ քրիմիական բազադութիւններ։

Մարդկային ընկերութեան մէջ ռամկավարական կարգերու հաստատման մեծապէս սատարած է քրիմիաբանութիւնը՝ շատ մը պերճանքի տառարկանները մատչելի ընելով բոլոր դասակարգերուն համար։

Բազմաթիւ արհեստներ և գիտութիւններ, և կեանքը ընդհանրապէս, ուղղակի կամ անուղղակի կերպով կ'ազդուին քրիմաբանութեան յառաջգիմական ամէն քայլառումովը։ Բայց քրիմաբանութիւնը մարդկութեան համար իր մեծապէս բաւիքը կատարած պիտի ըլլայ՝ աշխարհիս էն հրատապ երկու հարցերուն իր տուած և տալիք յոռատու պատասխաններովը։ Այս հարցերէն առաջինն է վառելանիւթի, կամ մեքենաները շարժող ոյժի անսպառ աղբիւր մը գտնել, և երկրորդն է աշխարհիս տեւականօրէն բազմացող բնակչութեան անհրաժեշտ սնունդը հայթայթել։

ՈՇԺԻ ԱՊԱԳԱՅ ԱՂԻԻԻԲԸ

Ընդհանրապէս բոլոր աշխարհի մէջ և մանաւանդ քաղաքակիրթ երկիրներու մէջ ճարտարարուեստական բոլոր հաստատութիւնները կանգուն պահող, բոլոր մեքենաները շարժող ոյժին մեծագոյն մասը կը հայթայթեն հանքածուխը և քարիւղը։ Գիտուններու հաշուին համեմատ ոյժի այս երկու աղբիւրներն ալ անսպառելի չեն։ Աշխարհի մէջ դրտնուած բոլոր հանքածուխի քանակը 2000 երկրիօնէ աւելի չէ և փրոֆ. Պ. Ճէկլըրի հաշիւով ասիկա հազիւ 1000 տարուան գործածութեան կը բաւէ, ըսպառումի ներկայ չափը անփոփոխ պահելով։ Ամէն օր նուազող այս ոյժի աղբիւրները կատարելապէս չցամաքած պէտք

է նոր ոյժի աղբիւրներ գտնել: Այս նըպատակով գիտունները զանազան խուզարկութիւններ և փորձեր կատարած եւ միջոցներ թելադրած են:

Ովկիանոսի հոսանքները, երկրի ներքին տաքութիւնը, միջհիւլէական ոյժը, երկրի թաւալումը իբր հաւանական ոյժի աղբիւրներ քննութեան առարկայ եղած են առանց ուէ խոստմաւից արդիւնքի: Հոլիերը և հոսող ջուրերը, ջրվէժները եթէ կատարելապէս կարենան շահագործուիլ հազիւ կրնան բոլոր աշխարհի համար պէտք եղած ոյժին չնչին մէկ տոկոսը հայթայթել:

Տրամադրելի ջրային ոյժը ներկայիս գործածուող տարեկան ոյժին հարիւրին չորսին կրնայ հաւասարիլ փրօֆ. Ճէկլըրի կարծիքին համեմատ:

Այրեցեալ գօտիի մէջ ովկիանոսի ջուրերուն մակերեսը արեւի կիզիչ ճառագայթները ծծելով մեծապէս կը տաքնայ, մինչդեռ անոր ներքեւի խաւերը սառուցեալ ովկիանոսէ եկող հոսանքներու պատճառաւ միշտ զով կը մնան. ֆարէնհայթ 37-39 աստիճան բարեխառնութիւն միայն ցուցնելով: Ահա մակերեսի և ներքեւի խաւերուն մէջ բարեխառնութեան այս տարբերութիւնը գիտունները կ'ուզեն շահագործել՝ ելիկաւորական ոյժ արտադրելու համար: Նշանաւոր ֆրանսացի գիտուն Տր. Գըլօտ և իր աշխատակիցը Պալլըրօ այս տարբերութիւնը օգտագործելու մէջ յաջող փորձեր կատարած են:

Արեգակնային տաքութիւնն է որ սակայն բուական ատենէ մ'իվիւր գիտունները զբաղեցուցած է ոյժի իբր աղբիւր շահագործման ենթարկելու համար: Փրոֆ. Ճէկլըրի հաշուով՝ այրեցեալ գօտիի մէջ 1275 քառակուսի մղոն տարածութեամբ տեղի մը ութ ժամուան մէջ ծծած արեգակնային տաքութիւնը՝ կը հաւասարի բոլոր աշխարհի մէկ տարուան միջոցին գործածուած ածուխի տաքու-

թեան: Արդ կարելի չէ՞ արեգակնային այս ահագին և գրեթէ անսպառելի ոյժը տաք եղանակներուն մթերել և ելեքտրականութեան վերածել: Ահա այս ուղղութեամբ զանազան փորձեր կատարուած է: Փրոֆ. Ճէկլըրի կարծիքով արեւի տաքութեան ոյժը շահագործելու ամենաշահաւոր և գործնական միջոցն է հետեւեալը: Արեւի տաքութիւնը կը ծծուի մասնաւոր նիւթերու կողմանէ, որոնց մէջ այդ տաքութիւնը «լուսաքիմիական» հակազդեցութիւն մը կ'արտադրէ և այդ կերպով քիմիական ոյժ յառաջ կը բերէ: Այս քիմիական ոյժը ապա գործածութեան յարմար ոյժի տեսակի մը, ըսենք ելեքտրականութեան կը վերածուի: Բոյսերու մէջ արեւի տաքութիւնը ճիշդ այսպիսի քիմիական ոյժի կը փոխուի. այս մեթոտի կիրառութեամբ արեգակնային տաքութիւնը աժան գինով և ընդարձակ չափով կարենայ շահագործուիլ, ինչպէս որ Տր. Ճէկլըր կը յուսայ, մարդկութեան մեծագոյն մէկ հարցը լուծուած պիտի ըլլայ:

Երկրորդ հարցին լուծումը, ուսեմատեղէնի հայթայթումը, ոչ թէ յուսատու փորձառական փուլին մէջ կը գտնուի առաջինին նման, այլ գործնականացած ըրականութիւն մ'է այսօր: Տեւականօրէն աւելցող ժողովուրդներու համար իր տարածութեամբը միշտ նոյնը մնացող աշխարհիս աղքատացած հողերը անբաւարար պիտի գան: Այս է եղած շատ մը տնտեսագէտներու, գիտուններու, պետական մարդերու կարծիքը երկար ատենէ ի վեր: Բայց քիմիագիտութիւնը արդէն չափով մը իր օժանդակութիւնը բերած է այս հարցին լուծման համար՝ աղքատ հողերը պարարտացնելով քիմիական նիւթերու միջոցաւ, և այսպէս հերքելով Մալթուսի այն կարծիքը թէ կարճ շրջանի մը միջոցին աշխարհիս բնակչութիւնը սովամահ պիտի մեռ-

Նիւ. Տր. Մարթին Մայլը, Նիւ Եօքս Բաղաքի Գոլդէնի տարաբանութեան փորձէսորը, կը պնդէ թէ «Միացեալ Նահանգաց պզտիկ մէկ մասը գիտական միջոցներով կրնայ բոլոր աշխարհի օրնունդը հայթայթել»

Popular Science Monthly թերթին մէջ [1929 Հոկ.ի թիւը] «Դեղահատեր որ առատ հունձք կ'արտադրեն» խորագրով յօդուած մը հրատարակուեցաւ, որուն մէջ յօդուածագիրը Տր. Ու. Յ. Կէրիքի այն նպատակով ըրած զգայացեալ եւ հրաշալի մէկ զիւտը կը նկարագրէ: Տր. Կէրիք հինգ տարիէ ի վեր կատարած 5000 փորձերուն իբր արդիւնքը պարզ եւ աժան միթոտ մը կը գտնէ ուստիստեղէն հայթայթող բոյսեր մշակելու համար:

Բոլոր սննդատու բոյսերուն բազաղըրութիւնները, տարբեր համեմատութիւններով, կը բաղկանայ ինը տարբերէ, որք են բորակածին, լուսածին, մակնիզիա, երկաթ, փոթածին, ծածումը եւ բնակիր: Բոյսի տեսակին համեմատ այս տարրերը տարբեր չափերով կը բազաղէ, անոնցմէ դեղահատներ կը պատրաստէ եւ պատիճներու մէջ կը գետեղէ: Այս դեղահատի պատիճները բոյսին մշակուելիք հողին կամ ջուրին մէջ կը դրուին, ուր լուծուելով արտադրութիւնը բազմապատիկ աւելցնելու կը ծառայեն: Այս մեթոտի կիրառութեամբ «ցորենի, գարիի, բրինձի եւ բամպակի հունձքը 25-50 առ հարիւր աւելցած է: Ծակնդեղի (զօճապաշ), ստեպլինի, բոզկին ման բոյսերը իրենց բնական ժամանակէն 20-30 օր առաջ հասած են, սովորականէն 60 առ հարիւր աւելի մեծ ըլլալով»:

Այս մեթոտը փորձուած է թէ՛ հողի եւ թէ՛ ջուրի մէջ: Բայց պարզ ջուրի մէջ մշակուած բոյսերը աւելի հունձք արտադրած են քան հողի մէջ մշակուածները: Վեցէն ութ մասնաչափ

խորութեամբ փայտէ տաշտերը ջուրով շեցուր, հարթ գետնի մը վրայ դանոնք իրարու քով գետեղէ, կուպրով պատած թուղթով տաշտերը ծածկէ, մշակուելիք բոյսերը բացուած ծակերէն ջուրին մէջ անկէ, ուր տոկալս կերպով գետեղուած կ'ըլլան սնուցիչ դեղահատերը: Ահա ասկէ կը բաղկանան մշակողին կատարելիք բոլոր աշխատանքը եւ ծախքը: Այս մեթոտը անհամեմատ զիւրի թիւներ կ'ընծայէ մշակողին համար: Երաշտութիւնը, ձմիւրը, ամառը, անապատը բարեխառն դօտին չափ չի պիտի ազդեն մշակութեան վրայ: Ջուրի փոքր քանակ մը, տեւէ հարթ գետին մը, անապատին մէջ, բերրի կամ անբերրի հողերու վրայ, բաւական է առատ հունձք մը ստանալու համար: Նոյն իսկ տուներու տանիքները շատ զիւրութեամբ կարելի է մէկ մէկ ծաղկաւտանի, բանջարանոցի կամ պզտիկ շարտերու վերածել: «Հողերը պարարտացնելու գիտութիւնը երեւան գալէն ի վեր երկրագործութեան համար մեծապոյն բարիքն է» որ Տր. Կէրիք կ'ընծայէ իր այս գիտածով: Քիչ տեղ, քիչ ծախք եւ աշխատանք, առատ հունձք եւ ժամանակէն առաջ, մինչ մարախները եւ ուրիշ միջտաները խոնաց աւերիչ գործին չեն սկսած, ահա այս է այն բարիքը զոր այս գիւտը կը խոստանայ մարդկութեան:

Տ. Ծ. Խ.

Մ. Խ. Այս յօդուածին նիւթին մեծագոյն մասը քաղուած է Scientific American-ի, 1930, Փետր.ի թիւին երկու յօդուածներէն — A Modern Inferno, by Martin Meyer, Ph. D., եւ What Will Be the Power Source of Future, by Prof. F. M. Jæger — եւ Popular Science Monthly թերթին 1929, Հոկ.ի թիւին մէջ Plant "Pills" Grow Bumper Crops յօդուածէն, արտատպուած The Readers Digest-ի մէջ:

Ս. ԳՐԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ
ՊԵՂՈՒՄՆԵՐ

Ձրենդեղը պատմական իրողութիւնն է: Քիչ քաղաքը Սուսերեան կոչուող ցեղին կողմանէ Եփրատի եզերքը շինուած է Ք. Ա. 5000 թուականին, և տեւականօրէն բնակելի քաղաք մը եղած է մինչև Պարթևական շրջանը: Հոս կատարուող պեղումները մեծ լոյս մը սփռած են պատմութեան ինչ ինչ մութ կէտերուն վրայ: Քաղաքին տեղը, Թէլ-Խնդարա անուն բլուր մը, 60 ոտք խորութեամբ փորուած է, որուն իւրաքանչիւնքը պատմութեան տարբեր շրջանները և քաղաքակրթական տարբեր աստիճաններ ցուցնող հողի խաւեր երևան ելած են: Ահա այս շերտերէն մէկը, 1.5 ոտք թանձրութեամբ, մասնաւոր ուշագրութեան առարկայ եղաւ: Ասիկայ կը բաղկանար փափու նուրբ աւազէ, որուն խառնուած էին խեցիներ և ձուկեր: Ասիկայ յայտնի կը ցուցնէր թէ Քիչ քաղաքը ողողումի մը պատճառաւ կործանած էր, Ք. Ա. 3300 ին: Ուրիշ տեղեր կատարուող պեղումները նոյն պարունակութեամբ նման խաւեր երևան հանած են, որոնք կը ցուցնեն թէ Եփրատի եզերքը շինուած Սուսերեան բլուր մեծ քաղաքներ կործանուած էին և թէ ողողումը 12 մղոնէ աւելի չէ տարածուած գէպի Եփրատի Արևելեան կողմը:

«Հին Պատմութեան Մեկ Նոր Էջը»

Լաթաքիայէ գէպի հիւսիս 10 մղոն հեռաւորութեամբ կը գտնուի պղտիկ խորշ մը Մինէթ—էլ—Պայտա անունով, որ պատերազմէն առաջ ծանօթ էր իւր հնախօսական արժէք ունեցող վայր մը: Անցեալ տարի՝ մինչ Ալավի մը ծոցին մօտ տեղ մը իւր արտին մէջ կը գործէր՝ ծակ մը կը քաջուի, զոր բանալով կը տեսնէ թէ ստորերկրեայ սենեակի մը մուտքն է ան: Ներս մտնելով իր թանկագին նկատած ոսկեղէն և այլն

առարկաները կ'առնէ և զաղտնի կը ծախէ: Ասոր լուրը տարածուելէն վերջ Ֆրանսական արշաւախումբ մը Փրոֆ. Շէֆլըրի գլխաւորութեամբ հերու գարունը պեղումներ կ'ընէ յիշեալ վայրը:

Մինէթ-էլ-Պէյտա հին առեւտրական կարևոր նաւահանգիստ մըն էր, ուր հաստատուած էր Կրէտա-Կիպրական գաղութ մը, և կ'ընդէր Կրէտէն, Կիպրոսէն և Եգիպտոսէն ապրանքներ փոխադրելով Միջագետքի մեծ կեդրոնները:

Ծոցին մօտ կը գտնուի գաղութին գերեզմանատունը 3000 քառակուսի մէթր տարածութեամբ: Գերեզմաններու մէջ հնախօսական մեծ արժէք ունեցող առարկաներ գտնուած են, որոնք յայտնի կերպով կը ցուցնեն թէ հոս թաղաւորական հարստութիւն մը կար, որ Քրիստոսէ 1300-1400 տարիներ առաջ Եգիպտոսի բարեկամը կամ մէկ դաշնակիցն էր: Առարկաներէն շատերը Կիպրական կամ Կրէտական արտադրութիւններ են, և ուրիշ շատեր Եգիպտական քաղաքակրթութեան ազդեցութիւնը կը կրեն: Մեր սահմանափակ էջը չի ներեր ստոնյ թուումը ընել: Բայց ինչ որ զգայացունց յայտնութիւն մը կը նկատուի սա է թէ Բաս Շամրայի մէջ երևան հանուած արքայական պալատին մէջ զրոնուած է զրադարան մը, որ կը պարունակէ Եգիպտոսի և տեղի իշխանին միջի կատարուած շատ մը թղթակցութիւնների սեպածե գիրերով: Այս գիրերէն ոման, կը նմանին Թէլ-էլ-Ամարնայի մէջ գտնուածներուն: Բայց գրութիւններէն մեծ մասը գրուած են մինչև հիմա ծանօթ գիրերէն ուէ մէկուն չնմանող ձևերով: Փրոֆ. Շէֆլըր կը կարծէ թէ գրելու այս ձևը այբուբենական է, և ունի 26 տառեր: Նոր լեզու մը եւ նոր գիրեր, որոնք երբ կարգացուին մեծ լոյս պիտի սփռեն միջերկրականեան պատմութեան վրայ:

Բաղնց Տ. Ճ. Խ.

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՂՈԹՔԻ ՕՐԸ

Մարտ 7, Ուրբաթ առաւօտ Համաշխարհային Աղօթքի Օրուան առթիւ մասնաւոր հաւաքով մը տեղի ունեցաւ Հալէպ, Ալլիվիլէի եկեղեցիին մէջ, ուր երեք ժամ տեւող այս բարեպաշտական ժողովին 300ի մօտ կիներ մասնակցեցան: Ժողովին օրէն առաջ աղօթքի նիւթերը պարունակող տպեալ թուղթեր ցրուած և նախապատրաստական աղօթածողութիւններ կատարուած էին: Հիւանդ եղող կին մը ըսաւ թէ այդ օրուան կ'արօտով կ'սպասէր, իբր խնջոյքի պահ մը և խընդրեց որ իրեն համար աղօթեն մասնակցիլ կարենալու չափ աղէկնալուն համար:

Շատ ներշնչող տեսարան մը կը պարզէին այդ 300 կիները: Ամպիոնին ետեւը մութ կարմիր վարդոյրին վրայ գրուած էր, «ես երբ երկրէ բարձրանամ, ամէնն ալ ինծի պիտի քաշեմ» համարը: Ասոր տակը կախուած էր մեծ քարաքանդակը՝ աշխարհի միսիօնարական գաշտերու:

Երգէ մը և մի քանի աղօթքներէ վերջ Միս ֆօրմըն խօսեցաւ օրուան նըպատակին վրայ և քարաքանդակը վրայ ցուցուց աղօթքներու շղթան, որ Ճարտնէն սկսեալ պիտի շարունակուէր իբր արշալոյսը ծագէր ամէն երկրի մէջ: Ապա Միսիս Մէրիլ Յիսուսի աղօթքի կեանքին մասին Ս. Գրքէն ընթերցումներ ըրաւ և աղօթքի մասին խոստումներ կարգաց: Երրորդ խօսողն էր Սր. Հ. Պիւլ, որուն նիւթն էր «Մեր սիրտերուն մէջ Ս. Հոգիի գործունէութեան արգելքները»: Ասոր յաջորդեցին ջերմեռանդ աղօթքները, երբեմն միեւնոյն ատեն երկու անձեր աղօթեցին:

Վերջին խօսողն էր Տիկ. Վեր. Բէթէնճեան, նիւթ ունենալով «Մեր եկեղեցիներուն պէտքերը»: Ապա նորէն աղօթքներ մատուցուեցան բոլոր այս

եկեղեցիներուն համար: Ժողովը դժուարութեամբ փակուեցաւ և ամպիոնի վերտառութեան զարմանալի խոստումը իրենց սրտերուն մէջ բաժնուեցան:

Վեր. Մ. ՓԱՓԱՋԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ Մէջ

Վեր. Մ. Փափազեան Յունուարի վերջին եւ փետր.ի առաջին օրերը Ֆրանսայի մէջ անցուծած է, ուսկից գացած է Յունաստան:

Յունաստանէն մեկի կը գրուի Յուն. վարի 28 թուակիր գրութեամբ մը.—

Վեր. Մ. Փափազեան երկու շաբաթ առաջ Աթէնք հասաւ: Բէմբի եկեղեցիներուն մէջ քարոզներ տուաւ, և գիւղերները հոգեւոր արթնութեան ժողովներ սարքեց, որոնց ժողովուրդը մեծ եռանդով և փափաքով մասնակցեցաւ, հոգեւորապէս մեծապէս օգտուելով:

Վեր. Մ. Փափազեան գրեթէ շաբաթ մը հոս մնալէ վերջ Սելանիկ անցաւ, հոն ևս հոգեւոր ժողովներ սարքելով մեծապէս օգնեց ժողովուրդին, իր հոն անցուցած մէկ շաբթուան միջոցին: Հիմա նորէն Աթէնք կը գտնուի, ուր իր ժամանակին և ոյժին կարեւոր մասը Սիււշ ալ Րիլիմընի մէջ կը գործածէ, շաբթ մը դասախօսութիւններ տալով եկեղեցավարութեան և քարոզչական պաշտօնին մասին՝ աւարտող կարգին, «Բրիտանիայի եկեղեցին, Ասոր նպատակն ու գործը» նիւթին վրայ՝ ընդհանուրին: Թէ՛ ուսանողները և թէ՛ դուրսէն եկող հովիւները, քարոզիչներն ու հոգեւոր գործիչները շատ կ'օգտուին այս դասախօսութիւններէն: Թէ՛ Աթէնքի և թէ՛ Սելանիկի ժողովները մեծ գնահատումի և շնորհակալութեան արժանացեր են:

Վեր. Մ. Փափազեան Մարտ 16ին Եգիպտոս պիտի գտնուի: